ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1964 Общественные науки

Վ. Հ. Վարդանյան

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ VII ԴԱՐԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Հայ և վրաց ժողովուրդների բազմադարյա պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում VII դարը, հատկապես դարասկիզբը։ Բյուզանդական կայսրությունը, որ պատմության ասպարեզի վրա ծանրակշիռ դիրք ձեռք բերեց և վիթխարի հզորության հասավ 5—7-րդ դարերում, իր նվաճողական արշավանքների ճանապարհին դեմ էր առել իրեն արժանի մի ախոյանի՝ իրանական լայնածավալ տերիտորիայի վրա իշխող Սասանյանների հզոր միապետությանը՝ իր ոչ պակաս նվաճողական ձգտումներով։ Դարեր շարունակ նրանք մաքառում էին միմյանց դեմ և կատաղի մրցության մեջ էին մտել թե իրենցից որին կհաջողվի կուլ տալ մյուսին։ Այդ անվերջանալի պատերազմների առյուծտ թատերաբեմը մեծ մասամբ Հայաստանը, Վրաստանն ու Աղվանքն էին։ Այդ ժողովուրդների ներքին կյանքին վնասում էին ոչ միայն ավերիչ պատերազմները, այլև նրանց հողի վրայով անցնող թշնամական բանակները, որոնք իրենց ետևից թողնում էին ավեր, ավար, կողոպուտ։ Օտար նվաճողների կողմից գործադրված չարաշահական բռնությունների ու հալածանքի պատճառով այդ ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական կյանքը տևականորեն ետ էր մնում և լճացման դատապարտվում։ Դտնվելով օտար տիրապետությունների ծանր ու դաժան լծի տակ, Հայաստանն ու մյուս փոքր ժողովուրդները ամբողջ միջնադարում խաղաղ և բնական զարգացման քիչ թե շատ տևական ընթացք համարյա չունեցան։ Օտարների անտանելի լուծն ու բռնությունները, սնփական տիրողների անօրինակ ճնշումներն ամբողջությամբ ծանրացած էին աշխատավոր ժողովրդի ուսերին։ Ուստի բնական և հասկանալի են զանազան կրոնական և աղանդավորական թողի տակ ծածկված ժողովրդական այն հուզումներն ու ապստամբական շարժումները, որոնցով լեցուն է այդ ժողովուրդների ամբողջ միջնադարի պատմությունը։

Նվաճված ժողովուրդները հաճությամբ չէին տանում նաև օտարի լուծը և ինչպես հայոց, նույնպես և վրաց ու աղվանից այդ շրջանի պատմությունը լի է պարսկա-բյուզանդական ասիմիլյատորության դեմ ուղղված ժողովրդական ըմբոստության բազմաթիվ փաստերով։ Պետք է նշել, որ այդ ապստամբությունների ժամանակ այս երեք ժողովուրդները հանդես էին գալիս միասնաբար, որը բխում էր հայ, վրացի և աղվան ժողովուրդների գոյության պահպանման օբյեկտիվ պահանջներից, նրանց տնտեսական, քաղաքական և կուլտուրական պրոգրեսի բնական շահերից։ Այս եղբայրական միության ամուր հիմքը, սակայն, խախտվում է 7-րդ դարի նախօրյակին։ Դրա պատճառների բացատրությունն է ահա մեր ներկա հոդվածի օբյեկտն ու նպատակակետը։

* * *

Հայաստանի և հարևան մյուս ժողովուրդների քաղաքական ու տնտեսական կյանքը 5-րդ դարից սկսած խորը ճգնաժամ էր ապրում։ Վիճակը ավելի է վատթարանում հատկապես 6-րդ դարի առաջին կեսին։ Հուստինիանոս կայսրի (525—567) կողմից ծրագրված ռեֆորմներով նախատեսված էր նվաճված և հպատակ երկրներում մտցնել այնպիսի վարչակարգ, որը ոչ մի բանով չտարբերվի ամբողջ կայսրության մեջ հաստատված կարգերից[1]։

Ինչպես ակադեմիկ Հ. Մանանդյանն է ցույց տվել, կայսրի նպատակն էր վերականգնել Հռոմեական զորեղ և միաձույլ կայսրությունը, վերացնելով տեղական բոլոր առանձնահատկությունները, այդ թվում և կրոնական ինքնուրույնությունը։ Նրա ձգտումն էր մի համընդհանուր հավատի, մի կամքի մեջ միաձուլել այլալեզու և այլադավան բոլոր հարևան ժողովուրդներին։

---

1 Այդ մասին մանրամասն տե՛ս Ն. Ադոնցի Армения в эпоху Юстиниана աշխատության մեջ (СПБ, 1908), նաև Հ. Մանանդյանի Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 2-րդ՝ Բ մասի նյութերը։

Այս հողի վրա բորբոքվում են դավանաբանական սուր վեճեր հայոց և հունական եկեղեցիների միջև, որը իր ոլորտի մեջ է առնում նաև անդրկովկասյան մյուս ժողովուրդներին։ Իրենց նպատակին հասնելու համար բյուզանդական խորամանկ քաղաքագետները ամեն կերպ աշխատում էին զանազան տարակարծություններ սերմանել, բորբոքել դավանաբանական վեճեր։ Տեսնելով հայոց եկեղեցու ցուցաբերած եռանդն ու դիմադիր ուժեղ ոգին, նրանք չանացին քայքայում մտցնել այդ եկեղեցու վարդապետության մեջ։ Ավելին. նրանք ձգտում էին նույնպիսի քայքայում ու տարրալուծում առաջացնել նաև հայոց և հարևան մյուս ժողովուրդների կրոնական միասնական դավանանքի մեջ։

V—VI-րդ դարերում Հայաստանը լցված էր զանազան հերձվածողներով և աղանդներով. Նեստորականություն, Մծղնեություն, Մանիքեություն, Թեոդորետի ուսմունք և այլն։ Մյուս կողմից պարսիկները՝ իրենց հնթանոսական կրոնով, տիրելու նախկին մտադրությամբ, միշամտում էին քրիստոնեական եկեղեցու մղած վեճերին և ինքնակամ ու ապօրինի վճիռներ կայացնում։

Այդ ժամանակ է, որ մեծ թվով եկեղեցականներ, ինչպես հայ, այնպես էլ վրացի, ընդունում են քաղկեդոնությունը, և կազմալուծվել է ուկսում միարնակ վարդապետությունը։ Հայ եկեղեցականության մի մասը շուտ է գալիս դեպի բյուզանդականություն։ Դրանից քիչ անց՝ Մորիկի ժամանակ, տեղի է ունենում հայոց եկեղեցու երկու մասի բաժանվելը (հակաթոռ կաթողիկոսության ստեղծմամբ), ապա՝ 7-րդ դարի սկզբին, վրաց եկեղեցու հայկականից անջատվելը։ Այսպիսով, կրոնական այն սուր պայքարը, որ դավանանքի անվան տակ մղվում էր ամբողջ քրիստոնյա աշխարհում, իր հիմքում ուներ խիստ քաղաքական-սոցիալական բովանդակություն. իսկ հետևում՝ Բյուզանդական կայսրության ճարպիկ դիվանագիտության մեքենայությունները։

Առավելապես ծանր ու վատթար էր անդրկովկասյան ժողովուրդների դրությունը Հուստինիանոսից հետո գահ բարձրացած Մորիկ կայսրի ժամանակ (582—602)։ Իր վարած արտաքին քաղաքականության մեջ այս բռնակալը Հուստինիանոսի հարազատ ժառանգն էր։ Սրա օրով է տեղի ունենում Հայաստանի երկրորդ բաժանումը։ 591 թվականին հաշտություն է կնքվում Մորիկի և Խոսրով Փարվեզի միջև, որի համաձայն Հայաստանի մեծ մասը բաժին է դառնում Բյուզանդիային։ Նույն բախտը վիճակվում է նաև Վրաստանին։ Հայաստանում ստեղծվում է երկու հակաթոռ կաթուղիկոսություն՝ մեկը Դվինում, որտեղ կաթուղիկոս էր մոլի հակաքաղկեդոնական Մովսես Եղվարդեցին, մյուսը՝ Ավան գյուղաքաղաքում, որտեղ կաթուղիկոս է դառնում բյուզանդացիների կողմից քաղկեդոնություն ընդունած Հովհաննես Բագրևանդացին։ Դվինի աթոռը վճռականապես մերժեց կայսեր պահանջը օրթոդոքսության (ուղղափառության) վերաբերյալ, որի համար էլ սա նշանակեց հակաթոռ՝ ըստ իր ցանկության և նրա իրավասությանը ենթարկեց ամբողջ Արևմտահայաստանը։ Դա հնարավորություն և լայն ու ազատ ասպարեզ է բաց անում բյուզանդական քաղկեդոնիկ քարոզիչների համար՝ իրենց վարդապետությունը այնտեղ տարածելու։ Այսպիսով, մարմին էր առնում հայերի հոգեպես հույների հետ միացնելու Մորիկի հղացած ծրագիրը, այլապես նրան շատ չէր հետաքրքրի այն հարցը, թե հայերը քանի բնություն էին տեսնում Քրիստոսի մեջ։

Խոսրով Նուշիրվանի կողմից Արևելյան Հայաստանի և նրա հարևանների նկատմամբ գործադրած քաղաքականությունը բյուզանդականի մի տարատեսակն էր. տարբերությունը միայն արտաքին էր։ Կրոնի հարցում Խոսրովը հանդես էր բերում որոշ հանդուրժողականություն, որպեսզի այդպիսով շահի իր հպատակ քրիստոնյա և այլադավան ժողովուրդների վստահությունը, ամրապնդի իր դիրքերը նվաճված երկրներում՝ ընդդեմ բյուզանդական ծավալվող ազդեցության։ Պարսից արքան մյուս կողմից ցանկանում էր օգտվել հայոց և հունաց եկեղեցիների միջև սկսված տարաձայնություններից և օգտագործել դրանք ըստ հանգամանքների բերման։ Խոսրովի վարած այս խորամանկ քաղաքականությունը ժամանակին մեծ ազդեցություն թողեց պարզամիտ ժողովուրդների երևակայության վրա։ VII դարի հայ պատմիչ Սեբեոսը հավատացած է նույնիսկ, թե Խոսրովը այնքան արդարամիտ, իմաստուն և բարեպաշտ էր, որ կյանքի վերջում քրիստոնյա մկրտվեց։ Հենց այդ ժամանակ Վրաստանում, Սյունիքում, մասամբ նաև Աղվանքում գլուխ են բարձրացնում Նեստորական, Մանիքեական և այլ կարգի հերձվածողներ, իր համար զարգացման ուղիներ է որոնում քաղկեդոնական վարդապետությունը։ Այդ մասին են վկայում հայ հոգևորականների և Հովհաննես կաթուղիկոսի թղթերը՝ ուղղված Սյունաց Վրթանես եպիսկոպոսին և աղվանների եպիսկոպոսներին[2]։

Հայոց կաթուղիկոսն ու եպիսկոպոսները դժկամություն են հայտնում, որ Սյունաց և Աղվանից կողմերում տարածվող աղանդների դեմ ոչ մի միջոց ձեռք չի առնվում և դրանց ազդե-

2 «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 78—84։

ցության շրջանները ծավալվում են։ Հիշյալ թղթերում Վրաստանի մասին ոչ մի խոսք չկա. նշանակում է, որ վրաց եկեղեցու՝ հայկականից հեռանալու և քաղկեդոնությանը հարելու մասին դեռևս կասկած կամ վախ չի նկատվել։ Ուշագրավ է նաև այն փաստը, որ քաղկեդոնականներն իրենց քայքայիչ գործունեությունը ծավալում էին երկրի այնպիսի շրջաններում, որտեղ ավելի ուժեղ էին կենտրոնախույս ձգտումներն ու տրամադրությունները։ Այդ է պատճառը, որ Հովհաննես կաթուղիկոսը խիստ հրովարտակով պահանջում էր ամենուրեք մերժել քաղկեդոնությունը և ոչ մի հարաբերություն չունենալ քաղկեդոնիկների հետ։ Բայց կարծես ճակատագրի դաղրն էր, որ հենց ինքը հետագայում դառնար քաղկեդոնական։

Այստեղ մի կետ կա, որը ներտորեն առնչվում է հայերի կողմից 572 թ. պարսկական տիրապետության դեմ բարձրացած ապստամբությանը։ Երբ անհամաձայնության հետևանքով ապրստամբությունը տանուլ է տրվում, Վարդանը և կաթուղիկոսը իրենց կողմնակիցներով հեռանում են Հայաստանից, գնում Կ. Պոլիս և ապավինում կայսեր հովանավորությանը։ Հուստինիանոսը սիրով է հյուրընկալում նրանց և ընդունել տալիս։ քաղկեդոնություն։ Լեոն գտնում է, որ ապրստամբության միությունը քանդվեց, որովհետև նրա ղեկավարների մի մասը չընդունեց կայսեր այդ առաջարկը։ Ծանր էր հատկապես կաթուղիկոսի դրությունը։ Մինչ այդ նրան տեսանք իբրև հակաքաղկեդոնիկների համոզված պաշտպան, որ ամեն կերպ ջանում էր աղվանից և սյունաց եկեղեցիները հեռու պահել միաբնակ վարդապետությանը դավաճանելուց. սակայն այս անգամ ինքն է դավանափոխ լինում։

Խոսելով այս մասին Լեոն նկատում է, որ նա «իր կրոնական համոզմունքները զոհ է բերում հայրենիքի փրկության գաղափարին և հաղորդվում քաղկեդոնիկների հետ»[3]։ Սա էլ մի կռվան է դավանաբանական այդ վեճերի ու երկպառակության արմատը սոցիալ-քաղաքական հանգամանքներով բացատրելու համար։

Այնուհետև մինչև Մորիկի մահը (602) Հայաստանն ու իր հարևանները ապրում են խաղաղ շինարարական մի տասնամյակ, որը վերջանում է Մորիկի մահվամբ։ Դրանից քիչ անց նորից վերսկսվում են պարսկա-բյուզանդական պատերազմները, և այս անգամ հաջողության աստղը թեքվում է արդեն պարսիկների կողմը։

Այսպիսին էր ահա պատմական իրավիճակն այն ժամանակաշրջանում, երբ առաջ է գալիս հայ-վրացական եկեղեցական հարցը անջատումը, որը հսկայական բացասական ազդեցություն ունեցավ երկու բախտակից ժողովուրդների ճակատագրի վրա։

Հարցի ավելի բազմակողմանի քննության և ավելի հիմնավոր եզրակացության հանգելու համար փոքր ինչ ետ գնանք, մինչև քրիստոնեության մուտքը Հայաստան և Վրաստան և տեսնենք, թե ինչպիսի պարագաներում տեղի ունեցավ այդ ժողովուրդների դարձը և թե ինչպիսի հարաբերության մեջ էին գտնվում նրանք միմյանց հետ մինչև կրոնական պառակտումը։

Պատմական բոլոր աղբյուրները, հին թե նոր, միաբերան վկայում են, որ Հայաստանը և Վրաստանը միաժամանակ ընդունեցին քրիստոնեությունը։ Դրանց մի մասը հակված են պնդելու, թե դեռևս Գրիգոր Լուսավորչից առաջ Հայաստանում քարոզիչ եղավ սրբուհի Հռիփսիմեն, իսկ Վրաստանում՝ Նունեն։ Ն. Ակինյանը վրացիների դարձը Նունեի կողմից կատարվելը, հավանական չհամարելով, այն դիտում է իբրև առասպել և վրացիների դարձը կապում Գրիգոր Լուսավորչի անվան հետ[4]։

Ակինյանը գտնում է, որ հայերն ու վրացիները քրիստոնեությունն ընդունեցին IV դարում, Գր. Լուսավորչի ձեռքով։ Մառը այն կարծիքին է, թե արիազների, ալանների ու աղվանների լուսավորությունն էլ նույն մարդու ձեռքով կատարվեց[5]։

Սա շատ կարևոր հանգամանք է, որովհետև եթե երկու ժողովուրդների դարձն էլ նույն ժամանակ և նույն մարդու ձեռքով կատարվեց, ապա բնական է, որ երկուսի մոտ էլ նա նույն վարդապետությունը քարոզեց։ Այդ ժամանակից սկսած մինչև VI դարի վերջին տասնամյակները դավանանքի հարցում որևէ խտրություն կամ անհամաձայնություն հայերի և վրացիների միջև չի նկատվել։ Հայ, վրաց, օտարազգի բոլոր գրավոր հիշատակարանները միաձայն վկայում են, որ սկզբից և ետ, այսինքն IV դարից, երբ քրիստոնեությունն իբրև պետական կրոն հաստատվեց թե՛ Հայաստանում և թե՛ Վրաստանում, «միաբանություն էր վրաց և հայոց ընդ

---

3 Լեո, Հայոց պատմություն, հ. 2-րդ, էջ 210։

4 Տե՛ս Հ. Ն. Ակինյան, Քրիստոնեության մուտքը Հայաստան և Վրաստան. Վիեննա. 1949։

5 Н. Марр, Крещение Армян, Грузин, Абхазов и Аланов святым Григорием. СПБ, 1905.

միմեանս....—և ինչպես Կյուրիոն կաթողիկոսն է գրում իր թղթերից մեկում,—... եւ այլ ինչ բանք և խաւսք չէին ուրուք եղեալ ի ներքս. իսկ այժմ ուստի՞ եղեն»[6]։

Սակայն VI դարի վերջին և VII-ի սկզբին, երբ նշված հանգամանքների ազդեցությամբ, խիստ ընդհարում է տեղի ունենում հայ և վրաց եկեղեցիների միջև և քիչ անց (հավանաբար 608—609 թթ.) նրանք անջատվում են։ Քննարկվող հարցի համար նշանակություն են ներկայացնում առաջին հերթին հնագույն աղբյուրները. դրանք են «Գիրք թղթոցը», Սեբեոսի և Կաղանկատվացու պատմությունները, ապա X դ. հայ պատմիչ Ուխտանեսի պատմությունը։ Ուրեմն հայկական աղբյուրները, քանի որ դրանք ավելի հին են, պատմվող դեպքերին դրեթե ժամանակակից, մանրապատում և ավելի ճշմարտամոտ։ Դրանցից բացի կարևոր են նաև օտարազգի՝ հատկապես հույն, արաբ և ասորի հեղինակների վկայությունները. ապա բուն վրաց աղբյուրները, որոնցից հիշատակության արժանի են 10-րդ դարի վրաց կաթողիկոս Արսենի թուղթը և վրաց Տարեգիրքը, որի մասին Ակինյանը նկատել է, որ լի է անախրոնիզմներով ու անճշտություններով։

Վրացի նշանավոր գիտնական Իվ. Ջավախիշվիլին նույնպես իր «История церковново разрыва между Грузией и Арменией в начале 7-го века» աշխատության մեջ հավաստի է համարում միայն հայկական աղբյուրները։ Ուսումնասիրության համար նրան նյութ են մատակարարում Ուխտանեսը, «Գիրք թղթոցը» և վրաց կաթողիկոս Արսենի գրությունը[7]։

Նշված աղբյուրները բոլորն էլ կրոնական տեսանկյունով են մոտենում հարցի գնահատմանը։ Դա հասկանալի է VII—X դդ. ապրող և զուտ կրոնական-աստվածաբանական դոգմաներով առաջնորդվող հեղինակների համար։ Բայց պետք է ասել, որ այդ մասին հետագայում առաջացած հայկական քննական գրականության և ուսումնասիրությունների ճնշող մեծամասնությունը նույնպես զուտ կրոնական խնդիրների շուրջն է պտտվում և հարցերը ժամանակաշրջանի պատմա-քաղաքական իրադարձությունների անմիջական արդյունք չի դիտում։

Հայ-վրացական եկեղեցական հարաբերությունների մասին արժեքավոր աշխատություն է գրել Ն. Ակինյանը[8]։ Դա մի ամբողջական ուսումնասիրություն է այդ ժողովուրդների կրոնական պառակտման վերաբերյալ՝ բոլոր մանրամասներով. ուստի ավելորդ ենք համարում այստեղ նորից անդրադառնալ այդ մանրամասնություններին։ Մեզ այստեղ հետաքրքրում է գլխավորապես այն հարցը, թե պատմական-քաղաքական ի՞նչ պայմաններում տեղի ունեցավ բաժանումը, ի՞նչ պատճառներով, որոշել այդ պատճառների բնույթը և, ամենակարևորը, պարզել, թե քաղաքական ի՞նչ հետևանքներ ունեցավ այն։

Ակինյանը վերոհիշյալ գրքի 26-րդ էջում այն միտքն է հայտնում, թե «... իբր քաղաքական անձանց միջամտությամբ մասամբ իվիք նաև քաղաքական գույն զգեցած են»։ Այսպես գրելով պետք է կարծել, ուրեմն, որ պայքարի հիմնական նպատակն ու դրդիչ ուժը կրոնական-դավանական էր, բայց որովհետև հարցին միջամտում էին նաև քաղաքական անձինք, ուստի միայն դրա համար և միայն այդ չափով այն քաղաքական երանգ էր ստացել։ Մինչդեռ դավանանքի հարցն այստեղ լոկ պատրվակ էր քողածածկելու համար քաղաքական այն նկատառումները, որոնք գալիս էին ավելի հեռվից՝ Բյուզանդական կայսրությունից։ Այդ պայքարը հայոց և հունաց եկեղեցիների միջև երկար ժամանակ գոյություն ունեցող այն պայքարի շարունակությունն էր, որ մղվում էր քաղաքական ազդեցության ոլորտների ընդլայնման նպատակով՝ մի կողմից և այդ ազդեցությունից դուրս մնալու, իր երկրի ու ժողովրդի իրավունքներն ու ինքնուրույնությունը պաշտպանելու արդարացի պահանջով՝ մյուս կողմից։ Հայ-վրացական եկեղեցական հարաբերությունները այն ժամանակ հանդես էին գալիս որպես այդ համընդհանուր ձգտման մի մասնավոր դեպք, որը ուղղությունն և ընթացք էր ստանում մի աներևույթ ուժի շնորհիվ։ Այդ աներևույթ ուժը կայսրության նենգ ու քողարկված դիվանագիտությունն էր։ Ավելի պարզ ասած, հայերն ու վրացիները VII դարում վիճաբանում ու թշնամանում էին միմյանց հետ այն բանի համար, թե վրաց եկեղեցին մնալով հայկականի հետ միասնական կշարունակի՞ պայքարը օտարերկրյա նվաճողների դեմ, կընդդիմանա՞ նրանց ասիմիլյատորական քաղաքականությանը, թե «ինքնագլուխ» հռչակվելու սին հույսերի մղումով կանջատվի հայկական եկեղեցու վարդապետությունից և ընդունելով քաղկեդոնությունը կթեքվի դեպի Բյուզանդական կայսրություն։

---

6 «Գիրք թղթոց», էջ 179։

7 Արսենի հիշյալ թուղթը հրատարակել է Թ. Ժորդանիան 1906 թ. վրացերեն և կոչվում է «Յաղագս սրբոյ հօրն մերոյ Արսենի կաթողիկոսի Մծխեթայ»։

8 Հ. Ն. Ակինյան, Կիւրիոն կաթողիկոս վրաց, Վիեննա, 1910։

Ջավախիշվիլին նույնպես, իր վերոհիշյալ աշխատության մեջ, ընդգծելով հայերի և վրացիների հարատև սերն ու միաբանությունը մինչև երկու եկեղեցիների բաժանումը, բաժանման պատճառ է համարում անհամաձայնությունը դավանանքի հարցում։ Իսկ Կյուրիոնի կողմից սրբուհի Շուշանիկի պաշտամունքի վրացերեն լեզվով արգելելը, համարում է ազգասիրական ձգտում, որով իբր Ցուրտավի եկեղեցուց ջնջվում էր հայոց ազդեցությունը։ Այսպիսի մոտեցումը այնքան էլ հավանական չէ։ Անհրաժեշտ էր նկատել, որ որքան էլ ուժեղ լիներ հայոց եկեղեցու ազդեցությունը վրացականի վրա կամ ընդհակառակը, երբեք նրանցից որևէ մեկը մյուսին չեզոքացնելու, ինքնուրույնությունից և իրավունքներից զրկելու ձգտումը չուներ և չէր էլ կարող ունենալ։ Այսպիսի վախն անտեղի էր, որովհետև այդ երկրները ոչ իրենց սոցիալ-տնտեսական և ոչ էլ մանավանդ քաղաքական վիճակով տվյալ ժամանակաշրջանում այդպես վարվելու ոչ մի պատճառ կամ նախադրյալ չունեին։ Մղելով դավանաբանական պայքար, հայերը փաստորեն մղում էին քաղաքական պայքար՝ հանուն իրենց կորցրած ազատության, անկախության, ինքնուրույնության՝ ընդդեմ օտար և թշնամի պետությունների կողմից իրագործվող ասիմիլյացիայի։ Բնական և հասկանալի է, ուրեմն, որ հայերը ամեն կերպ աշխատում էին ուժեղ պահել միասնությունը վրացիների ու անդրկովկասյան մյուս ժողովուրդների հետ։ Այդ պայքարի մասին ստեղծված ամբողջ գրականությունը այդ է հաստատում։

604 թ. վախճանվում է Մովսես Եղվարդեցին, որը, ինչպես տեսանք, մի մոլեռանդ և գործունյա հակաքաղկեդոնական էր. տեղապահ է դառնում նրանից ոչ պակաս հակաքաղկեդոնական Վրթանես Եպիսկոպոսը. Քերթող մականունով։

Մինչ այդ վրաց եկեղեցին որոշ չափով ենթակա էր հայոց եկեղեցու գերագահությանը, ենթարկվում էր նրա որոշումներին։ Հայոց կաթողիկոսն էր առաջադրում և նրա երաշխավորությամբ էր ընտրվում վրաց կաթողիկոսը, ինչպես ընտրվել էր քննվող իրադարձությունների կենտրոնական դեմքը՝ Կյուրիոն կաթողիկոսը (598 թե 599 թ.), դեռևս Մովսես կաթողիկոսի կենդանության օրով ու նրա անմիջական ջանքերի շնորհիվ։ Կյուրիոնը ստացել էր հունական լավ կրթություն, լավատեղյակ էր հայերենին, ապրել էր Մովսես կաթողիկոսի մոտ՝ Դվինում, դաստիարակվել այնտեղ, բայց հետագայում ընդունել էր քաղկեդոնությունը։

Ուխտանեսի պատմելով Մովսեսի կենդանության ժամանակ Կյուրիոնը եղել է Դվինի սուրբ Կաթողիկե եկեղեցու վանահայր՝ «վանաց իւրեց... այլև Քորեպիսկոպոս»[9]։ Ուխտանեսը, խոսելով Կյուրիոնի չար դիտավորությունների մասին, նկատում է, թե նա խաբելով Մովսես կաթողիկոսին, ծածկում էր նրանից իր չար դիտավորությունը, հաղորդություն ուներ նեստորականների և քաղկեդոնականների հետ և ջանում էր ամբողջ Վրաստանը տանել այդ ուղիով։

«Եւ այս լինէր յանիշխանութեանն Հայոց. քանզի բարձեալ էր թագաւորութիւնն յազգէ Արշակունեաց. և աշխարհս յերկուս բաժանեալ էին Պարսիկք և Հոռոմք»[10],—ցավով գրում է պատմիչը։ Այդ էր պատճառը, որ հայ-վրացական եկեղեցիների անջատումը թույլ չտալու և երկու դրացի ժողովուրդների միությունը պահպանելու ուղղությամբ այնպես ջանասիրաբար աշխատում էր Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունին։ Սա 606 թ. գումարում է եկեղեցական ժողով՝ հայերի համար նոր կաթողիկոս ընտրելու նպատակով։ Անհայտ պատճառներով այդ ժողովում կաթողիկոսի ընտրությունը տեղի չի ունենում, սակայն մշակվում և վավերացվում են մի շարք կանոններ քաղկեդոնության կամ այլ աղանդների հարող հոգևորականների մասին, սահմանվում են խիստ պատիժներ ու հալածանք։ Ինչպես Դվինի 506 թ., նույնպես և այս ժողովը «իր հակաքաղկեդոնական և հականեստորական որոշումներով ցանկանում էր դռները փակել ինչպես բյուզանդական, այնպես էլ պարսկական գաղափարական ազդեցությունների առջև»[11]։

Դեռևս 488 թ. Բաբգենի կողմից գումարված Վաղարշապատի ժողովում աղվանից Շավհաղեշե և վրաց Գաբրիել կաթողիկոսների մասնակցությամբ և աջակցությամբ, խիստ որոշում էր կայացվել այն մասին, որ ոչ մի մարդ չհամարձակվի որևէ հաղորդակցություն ունենալ քաղկեդոնիկների հետ, «ոչ բարեկամություն անել և ոչ էլ աղոթել»։ Այս թուղթը, որ ստորագրել էին երեք երկրների բազմաթիվ եպիսկոպոսներ ու հոգևորականներ, եռանդամբ պարտավորեցնում էր հավիտյան հաստատ մնալ այդ ուխտին[12]։ Ուստի հասկանալի են այն լուրջ տարաձայնությունները, որ առաջացան Կյուրիոնի ջանքերով Վրաստանում քաղկեդոնություն մտցնե-

---

9 *Ուխտանես, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ. 1871, 2-րդ մաս, էջ 4։*

10 *Նույն տեղում, էջ 7։*

11 *Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1963, էջ 353։*

12 *«Գիրք թղթոց», էջ 177 և 183։ Ուխտանեսի պատմություն, էջ 80 և 86։*

յու հետևանքով, և որի արձագանքները տարածվեցին Սյունիք ու Աղվանք, որտեղ տեղի էին ունենում հերձվածական խմորումներ։ Ահա Դվինի 606 թ. ժողովը որոշակի վերաբերմունք է մշակում այդ դավանակից եկեղեցիների անջատողական ձգտումներին ընդդեմ։ Հայաստանի Հայրենասեր իշխաններն ու եկեղեցու հայրերը պարզ տեսնում էին քաղաքական այն վտանգավոր հետևանքները, որոնք առաջ էին գալու այդ անջատումից և ամեն միջոց գործադրում էին անջատումը թույլ չտալու համար։ Հետագա դիպքերը, սակայն, հակառակ ընթացք են ունենում։

Հայրապետական գահին նստելուց հետո Կյուրիոնը ձեռնամուխ է լինում վրաց եկեղեցու համար ավտոկեֆալ (ինքնագլուխ) իրավունք նվաճելուն։ Բայց խնդիրը միայն այդ չէր։ Հայերը վրաց անկախ կաթուղիկոսության և ինքնագլուխ կառավարությանը երբեք էլ դեմ չեն եղել։ այդ մասին ոչ մի տեղ հիշատակություն չկա։ Հայերը դեմ էին վրաց եկեղեցու դավանափոխությանը, նրանց կողմից քաղքեդոնությունը ընդունելուն և դեպի բյուզանդականությունը թեքվելուն։ Հենց այս հողի վրա էլ առաջանում են բուռն վեճեր, տարաձայնություններ և, ի վերջո, տեղի է ունենում միաբավան երկու եկեղեցիների անջատում։

Այստեղ հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, թե սկզբնապես վրաց եկեղեցին ո՞ր պատրիարքության իրավասությանն էր պատկանում,—հարց, որը բազմաթիվ վեճեր է հարուցել տարբեր ժամանակներում։ Բազմաթիվ աղբյուրներն այդ մասին հակասական են։ Վրացական մի հին ավանդություն, որի համար հիմք են հանդիսացել ամենայն հավանականությամբ հին մատենագիրները, վրաց եկեղեցին դնում է Անտիոքի իրավասության տակ, Տարեգիրքը՝ Պոլսի պատրիարքության իրավասության, իսկ հայկական աղբյուրները՝ հայոց պատրիարքության[13]։ Այս կապակցությամբ մեծ արժեք են ներկայացնում 1906 թ. տեղի ունեցած ռուսաց նախապատրաստական եկեղեցական ժողովի նյութերը։ Ժողովը նվիրված էր վրաց եկեղեցու ինքնագլուխ կառավարության հարցին։ Այստեղ ընդարձակ զեկուցումով հանդես եկավ Ն. Մառը և բազմաթիվ փաստերով ապացուցեց հայ և վրաց եկեղեցիների միջև եղած վաղեմի կապը, չնայած Սուխումիի Կյուրիոն եպիսկոպոսն ու մյուսները ցանկանում էին ժխտել[14]։ Ակադեմիկ Ն. Յա. Մառը հիշյալ ժողովում կարդացած իր զեկուցման, ինչպես նաև ավելի մանրամասնորեն «Հայ-վրացական հարաբերությունների մասին անցյալում» իր աշխատության մեջ (տե՛ս Մուրա, 1898 թ.), պատմական բազմաթիվ աղբյուրների վկայությամբ, կասկածի տակ է առնում վրաց եկեղեցու կախումը Անտիոքից և ապացուցում Երուսաղեմի պատրիարքության գերիշխանությունը նրա վրա։ Արևելյան վրաց եկեղեցու սկզբնավորումը Անտիոքից եկած հարեալը նա բացատրում է նրանով, որ VIII դ. սկզբում, Արևմտյան Վրաստանի գործիչների ուժի և ազդեցության հետևանքով, քրիստոնեության սկզբնավորման մասին ավանդությունը տարածվեց Արևելյանի եկեղեցու վրա ևս և հետզհետե մթագնվեց ու անհետացավ նրա՝ արևելյան մյուս եկեղեցիների՝ հայկականի, ասորականի, աղվանների և պարսկականի հետ միասին անկախ ծագման գաղափարը։ Մանավանդ, երբ սրվեցին հայ-վրացական եկեղեցական վեճերը, ջանում էին ամեն կերպ ժխտել, մոռացնել տալ այն բոլորը, ինչ վկայում էր վրաց եկեղեցու կապը հայկականի հետ։

Վերոհիշյալ իր տեսակետների ճշմարտացիությունը ապացուցելու համար Ն. Մառը փաստարկներ է բերում տվյալ դարաշրջանում գործող եկեղեցական ծիսակատարություններից և կանոններից, որոնք պարզորոշ վկայում են վրաց եկեղեցու կապը Երուսաղեմի եկեղեցու հետ։

«Նագույն շրջանում,—գրում է նա,—վրաց եկեղեցին ավելի կապված է եղել Երուսաղեմի եկեղեցու հետ. Մծխեթի խաչը ծագում է Երուսաղեմից, հնագույն պատարագամատույցներում կան մաղթանքներ Երուսաղեմի հայրապետների համար սկսած Հակոբոս Տեառնեղբորից, բայց ոչ մի մաղթանք Անտիոքի հոնադավան պատրիարքների համար. ծննդյան տոնը կատարում էին Երուսաղեմի եկեղեցու սովորության համաձայն՝ հունվարի 6-ին, ինչպես պահպանել են դարդ հայերը և ոչ թե դեկտեմբերի 25-ին։ Անտիոքի եկեղեցին ընդունել է դեկտեմբերի 25-ին տոնելու սովորությունը 376-ին, մինչդեռ վրաց եկեղեցում դեռ երկար շարունակվում էր հին սովորությունը, և այս կասկածելի է դարձնում վրաց եկեղեցու կախումը Անտիոքի եկեղեցուց»[15]։

Մառի ամենազորավոր փաստարկը մեր կարծիքով այն է, որ հայ-վրացական եկեղեցական բնդհարման ու վեճերի ժամանակ յուրաքանչյուր կողմ իրեն համարում և ներկայացնում

---

13 Այդ մասին Մառի կարծիքները տե՛ս «Արարատ», 1898, էջ 75։

14 «Արարատ», 1907, էջ 85 (Մ. Ք. Ղազարյանի հոդվածը)։

15 Ն. Ակինյան, Կյուրիոն կաթուղիկոս վրաց, հավելվածը, էջ 286։

է իբրև հավատարիմ, իսկ հակառակորդին՝ դավաճանող Երուսաղեմի եկեղեցու դրած կանոններին ու դավանությանը[16]։

Ուրեմն Անտիոքի եկեղեցուց կապերը վաղուց էին խզված և վրացիները ձեռնադրություն ստանում էին հայոց պատրիարքությունից։ Պետք է կարծել, որ հայոց պատրիարքության գերագահությանը ենթարկվում էր միայն Արևելյան վրաց եկեղեցին և պայքարը մղվում էր սրա ու հայոց եկեղեցիների միջև։ Իսկ վրաց համընդհանուր եկեղեցին ինքնակառավարման իրավունք է ձեռք բերում ավելի ուշ։ Դրանից հետո միայն խզվում են բոլոր տեսակի կապերը, որ նա ուներ Երուսաղեմի եկեղեցու հետ։ Այս բոլորից այն հետևությունն է բխում, որ վրացական եկեղեցին ծագել է բյուզանդականի ազդեցությունից անկախ՝ առաքելական քարոզության և Երուսաղեմի եկեղեցու ավանդությունների հիման վրա։ Ուրեմն վրաց ժողովրդի դարձը թե՛ ժամանակով և թե՛ բովանդակությամբ կապված է հայոց ու արևելյան մյուս ժողովուրդների դարձի հետ. ուստի, բնական է, որ սկզբնական շրջանում սրանց հետ ավելի սերտ կապ ու մերձավորություն ուներ, քան բյուզանդական եկեղեցու։ Վերջինիս ազդեցությունը ուժեղացավ հետագայում՝ կայսրության հզորացման և նրա ազդեցության շրջանակների ընդարձակման հետ զուգընթաց։

Վերադառնանք նորից բաժանման հանգամանքներին։ Ինչպես տեսանք Մովսես Եղվարդեցու մահից հետո հայոց կաթողիկոսական գահը 3—4 տարի թափուր է մնում։ 608 թ. կաթողիկոս է ընտրվում Աբրահամ Աղբաթենացին, որը նույնպես հիմնավոր կրթություն ստացած, զարգացած անձնավորություն էր ու համոզված հակաքաղկեդոնական։ Սա շարունակում է իրենից առաջ սկսված դավանաբանական վեճն ու նամակագրությունը Կյուրիոնի հետ։ Իր գրած առաջին իսկ թղթում հայոց կաթողիկոսը զարմանք է հայտնում այն մասին, որ Ցուրտավի եկեղեցու եպիսկոպոս Մովսեսը հալածված է վանքից՝ ուղղափառ հավատին խոստովանելու և Սուրբ Շուշանիկ սրբուհու պաշտամունքը հարգելու պատճառով։ Թղթում նշված է, որ քրիստոնեությունն ընդունելու օրից ի վեր Ցուրտավի եկեղեցին «...զմիաւորութիւն հաւատոյ, և զասսնչականութիւն զերկոցունց աշխարհացս... անշարժ միջնորդութեամբ պահեր, ուստի սէր և խնամութիւնք մարմնաւորականք և հաղորդութիւնք հոգևորականք կատարէին ցնծալից ուրախութեամբ», որ այդ նույն օջախից այժմ թշնամություն է ծագում վրաց կաթողիկոսի անհեռատեսության հետևանքով։ «Այժմ ոչ է պարտ սրբութեանդ ձեռնել,—շարունակում է համոզել Կյուրիոնին Աբրահամը,—ատարութիւն ի մէջ արկանել երկոցունց աշխարհացս. և ճեղքել զմիաբան կամս. և ճռաքացուցանել զսէր և զխնամութիւն մարմնաւորական և զհաղորդութիւն հոգևորական»[17]։

Մեզ անհավատալի է թվում, ասում է Աբրահամը, որ դուք Քաղկեդոնությունն ու Լևոնի տոմարն եք դավանում, ուստի ցանկացանք գրով իմանալ, թե բանն ինչումն է։ Թղթերը բարձր արժեք են ներկայացնում նաև ոճական տեսակետից. գրված են վերին աստիճանի զուսպ և քաղաքավարի տոնով։ Կաթողիկոսը պատշաճավոր ու հարգալից լեզու է բանեցնում այն մարդու նկատմամբ, որի հետ խստորեն ընդհարվել է։ Նույնպիսի հարգալից լեզվով է պատասխանում նաև Կյուրիոնը և հետաքրքրականն այն է, որ սա ճգնում է իրեն արդարացնել հայ կաթողիկոսի առջև։ Դա նրա նախկին դիրքի մասին պերճախոս վկայություն է։

Այս առումով շատ արժեքավոր է Սմբատ մարզպանի նամակը Կյուրիոնին, որտեղ նույնպես նշված է հայոց ու վրաց վաղեմի բարեկամությունը՝ պատճառաբանելով, թե «...արիւն և ճարտպառութիւն ի միջի կայր»։ Մեղադրում է Կյուրիոնին, որ սա, փոխանակ աշխատելու այդ միությունն անխախտ պահել, ինքն է բորբոքում վեճեր ու տարաձայնություններ։ Պատասխան թղթում Կյուրիոնը աշխատում է արդարանալ և պառակտման ամբողջ մեղքը բարդել Մովսես եպիսկոպոսի վրա։ Մովսեսն էլ է նամակով դիմում Սմբատին և պնդում, թե վրաց կաթողիկոսի գրածներն ամբողջությամբ սուտ են, որպիսի բանը և այդ մասին կարող է վկայել ամեն ոք, ով մեր մոտից Վրաստան է գնում կամ ով այնտեղից է գալիս։ Մովսեսը վստահ է իր գրածների ճշտությանը։ Նա հայտնում է նաև, որ իր փոխարեն Ցուրտավի եպիսկոպոսական աթոռին նստողը նեստորական է և ոչ միայն հայերեն չգիտե, այլև նույնիսկ վրացերեն։

Ինչպես Սմբատ մարզպանը, այնպես էլ Աբրահամ կաթողիկոսը պարզ տեսնում էին պառակտման վտանգավորությունը քաղաքական տեսակետից. իրենց անհանգստությունն էին արտահայտում այդ կապակցությամբ և շարունակ զգուշացնում էին հեռու մնալ պառակտման կործանարար ուղուց։ Նշելով երկու բախտակից ժողովուրդների համար միասնության կարևորու-

16 «Գիրք թղթոց», էջ 161—168։

17 «Գիրք թղթոց», էջ 164 (ընդգծումները այստեղ և հետագայում մերն են. —Վ. Վ.)։

թյունը, Հայոց կաթողիկոսն իր մի այլ նամակում հետևյալն է գրում. «Զի յառաջ մինչ առաջինն Հարքն մեր ազգացս երկոցունց, և որք յայս իշխանութեան կարգեալ զոր այժմ մեք ունիմքս, նոքաւք հանդերձ միաբանէին յամենայն բարիսն. և զուգաց հեռանային յամենայն չարէ. Թուի ինձ թէ տեղեակ է ձեր սրբութիւդ այնմ»[18]։

Տարակարծությունների տեղիք չտալու համար, Աբրահամը բացահայտում է իր միտքը գրելով, թե մենք վիճաբանելու համար չենք ասում այս բոլորը, «այլ փութամք ի սէր և ի հաւատս հայրենի միաւորութեանն. և չխնդրեմք միայն զանձին աւգուտ. այլ բազմաց զի ապրեսցին...»[19]։ Նա նույնիսկ աղաչական տոնով է խոսում ստորինանով և դիրքով իրենից ավելի ցածր գտնվող կաթողիկոսի հետ, որպեսզի այդպիսով կարողանա կոտրել նրա համառությունը։ Օրինակ է բերում Բաբկենի ժամանակակից Գաբրիել վրաց կաթողիկոսին, որը ամեն մի հարց վճռելիս միաբան ու միակամ էր հայոց հետ։

Ուխտանեսի ասելով. վրաց կաթողիկոսի անջատողական տրամադրություններ դեռ վաղուց՝ Մովսեսի կենդանության ժամանակից ուներ։ Դրանք, սակայն, զգուշությամբ նա թաքցնում էր։ Այս կապակցությամբ հետաքրքրական է Մովսեսի նամակը Կյուրիոնին, որ բերում է Ուխտանեսը իր Պատմության մեջ։ Թղթոց գրքում այս նամակը հիշատակված չէ։ Նամակից երևում է, որ Մովսեսն էլ կասկածել է Կյուրիոնի հավատարմությանը, որովհետև վերջինս Դրանից գաղտնի, Վրաստանում ընդունել է Խուժիկ նեստորականին և նույնիսկ եպիսկոպոսության աստիճան տվել։ Մովսեսը գրում է Կյուրիոնին, թե նեստորական աղանդը հայ-վրաց միացյալ երեք ժողովներում մերժվել ու նզովվել է և զգուշացնում է՝ չխախտել այդ ուխտն ու երկու բարեկամ ժողովուրդների միջև եղած միավորությունը չքանդել։ Կյուրիոնը իր պատասխան թղթում վստահեցնում է, թե Խուժիկը մերժված ու հեռացված է, թե ինչպես որ պատվիրել է ինքը՝ Մովսեսը, այդպես էլ կլինի։

Ինչ մնում է երկու երկրների միավորությանը, ապա այդ մասին վրաց կաթողիկոսը գրում է. «Եւ որ վասն մեր եւ ձեր աշխարհաց էիք գրեալ և ասացեալ յաղագս միաբանութեանն՝ զոր ի մերում ժամանակիս է, մեք ի նոյնս ունիմք միաբանութիւն և ոչ փոխիմք»[20]։

Ուխտանեսը ասում է, թե Սմբատ մարզպանը նախօրոք տեղյակ էր Կյուրիոնի չար և ծածուկ մտադրություններին, բայց ոչինչ չկարողացավ անել կամ այդ մասին զգուշացնել կայսրին. որովհետև արդեն գիտեր, որ կայսրը «...միաբան է ընդ Կիւրիոնի և նորա հրաման՝ առ գործն այն...»։ Ուխտանեսը դրանում չի կասկածում։ Նա հավատում է, որ Աբրահամին և Սմբատին ուղղված Կյուրիոնի մի մութ ակնարկից՝ այն, թե «կեցուսցէ Աստուած զկայսրն, զի զաշխարհս մեր կեցոյց»[21], կռահում ենք նրա և կայսրի միջև եղած համաձայնությունը։

Բոլոր վկայությունները, այսպիսով, միաբերան հաստատում են, որ հայ և վրաց կրոնական պառակտումն իր հիմքում քաղաքական նպատակներ էր հետապնդում և նրանում բյուզանդական խարդախ քաղաքականության մատը անպայման խառն էր, մի պառակտում, որն զգալի վնաս բերեց երկուսին էլ։

Լեոն եզրակացնում է, որ կրոնական այդ անջատումը ավելի հիմնավոր պատճառ ուներ, քան կրոնականն էր. նա այդ կապում էր վրաց ազգային եկեղեցու ձևավորման պրոցեսի հետ։ «Առհասարակ,—գրում է նա,—նկատվում է մի բութ անկարողություն՝ այս վեճը խաղաղությամբ կարգավորելու մեջ։ Դվինի կառավարիչները չհասկացան, որ Վրաստանում, Կյուրիոնի ղեկավարությամբ, տեղի ուներ եկեղեցու կատարյալ ազգայնացման մեծ աշխատանքը և այդպիսի մի շարժման պետք է վերաբերվել լրջությամբ...»[22]։

Լեոն այս հարցում միայն կրոնական արմատն էր տեսնում և դա էլ հիմք է ծառայել նրա այդ կարծիքի համար։ Ավելին. նա Վրկանի մարզպան Սմբատին մեղադրում է նրա համար, որ հարցին քաղաքական նշանակություն է տալիս։ «Առհասարակ,—գրում է նա,—Վրկանի մարզպանն աշխատում էր հայ-վրացական զուտ կրոնական հարցերին տալ քաղաքական նշանակություն»[23]։ Մեր խորին համոզմամբ, հենց այստեղ է, որ Սմբատ մարզպանն ավելի ճիշտ էր տեսնում և գնահատում ստեղծված իրավիճակը։ Լեոն հայ և վրացի ժողովուրդների միջև առաջացած եղբայրասպան թշնամության պատճառ է տեսնում միայն այն հանգամանքը, որ «այդ

18 «Գիրք թղթոց», էջ 181։
19 Նույն տեղում, էջ 176։
20 Ուխտանեսի պատմություն, 2-րդ մաս, էջ 13։
21 Նույն տեղում, էջ 17։
22 Լ ե ո, Հայոց պատմություն, հ. 2-րդ, էջ 236։
23 Նույն տեղում, էջ 237։

երկրներում ապրող ազգերի առաջնորդները չկարողացան համաձայնվել, թե բանի բնություն կար Քրիստոսի մեջ և ինչպես էին դասավորվում այդ բնությունները»[24]։

Ինչևէ, վրաց անկախ կաթուղիկոսության հիմնադրումը (որը փաստորեն տեղի էլ չունեցավ) և հայկականից նրա անջատումը պատմական տվյալ էտապում խիստ վտանգավոր էր երկու ժողովուրդների համար էլ և ժամանակաշրջանի օբյեկտիվ պահանջը ոչ թե մասնատվելն էր, այլ ավելի սերտորեն միավորվելն ու համախմբվելը։ Էականն այստեղ եկեղեցիների անջատումը կամ վրաց եկեղեցու ինքնագլուխ հռչակվելը չէր։ Եթե այդպես լիներ, եթե Վրաստանն էլ բոլորովին անկախ կերպով իրավունք ստանար կառավարվելու ինչպես քաղաքական, նույնպես և հավատքի հարցերում, այդ լավ էր և հայերը բոլորովին էլ դեմ չէին այդպիսի անջատմանը։ Էականը, գլխավորն այստեղ այն էր, որ արմատական խզում էր տեղի ունենում երկու դրացի, եղբայրական ամուր կապերով կապված ժողովուրդների միջև։ Հայերից անջատվելով, Վրաստանը իրականում ոչ թե անկախ կաթուղիկոսություն էր ստեղծում՝ պահպանելով հանդերձ միարնակ վարդապետության սկզբունքները, այլ ընդունելով քաղկեդոնություն, հարում էր բյուզանդական եկեղեցուն, մտնում նրա պատրիարքության իրավասության ներքո։ Անջատման վտանգավորությունը հենց դրա մեջ էր։ Մանավանդ, որ իր նպատակների իրագործման համար Կյուրիոնին հաջողվեց իր հետևից տանել վրաց ամբողջ ավագանին։ Սա շատ ուշագրավ հանգամանք է։ Վրաց իշխանները խաբվելով բյուզանդացիների կեղծ ու ստապատիր խոստումներից, մյուս կողմից գրգռվելով Կյուրիոնի խոսքերից, որը խորամանկորեն շոշափում էր նրանց ինքնասիրությունն ընդդեմ հայկական եկեղեցու գահերեցության, սկսեցին հեռանալ հայերից և բարեկամություն փնտրել բյուզանդացիների մոտ, որտեղ քաղկեդոնություն դավանածներին սպասում էին բարձր պաշտոններ ու պատիվներ՝ արքունիքում։ Այս քայլի ամբողջ վտանգավորությունը հետագայում հայտնի դարձավ և արտահայտվեց Անդրկովկասն իր սեփական տերերից մաքրված տեսնելու Բյուզանդիայի ու Պարսկաստանի գործադրած ջանքերի, գաղթեցման ու հալածանքի քաղաքականության մեջ։

Այսպիսով, հայ-վրացական կրոնական պառակտումը VII դարի սկզբին, որ, չնայած հայկական եկեղեցու բազմաթիվ նշանավոր գործիչների ու ազդեցիկ իշխանների կողմից գործադրված համառ ջանքերին և դիմադրությանը, այնուամենայնիվ, տեղի ունեցավ, իր հիմքում ուներ խիստ քաղաքական բովանդակություն և սառնություն ու օտարացում մտցրեց երկու դրացի ու բախտակից ժողովուրդների փոխհարաբերությունների մեջ։ Բարերախտաբար, դա ժամանակավոր բնույթ կրեց։ Հայ, վրացի և աղվան ժողովուրդների բարեկամական կապերն ավելի հեռվից էին գալիս, դրանց արմատներն ավելի խոր էին, ուստի հասկանալի է, որ նրանց այդ վաղեմի ջերմ հարաբերություններն ու սերտ համագործակցությունը նորից իրենց նախկին-բանական վիճակն ստացան, որ շարունակվում է մինչև այսօր։

В. А. Варданян

АРМЯНО-ГРУЗИНСКИЕ ОТНОШЕНИЯ НА ПОРОГЕ VII ВЕКА

Резюме

Армянский и грузинский народы связывает вековая дружба. Основой ее является сходство их исторических судеб. В истории этих соседних народов, тесно связанных между собой узами экономической, политической, культурной, даже духовной жизни, особое место занимает начало VII века. Вследствие историко-политических обстоятельств в это время возник армяно-грузинский церковный вопрос. Сначала произошел раскол, а потом и разделение этих церквей, что имело отрицательное влияние на их дальнейшие судьбы.

Этот вопрос с формальной стороны носил религиозный характер. После смерти католикоса армян Мовсеса Егвардеци (604) католикос Грузии Кюрион, с целью обеспечения независимого положения грузинской церкви и самоуправления (автокефаля), вступает в переговоры с отцами греческой халкедонской церкви и с их помощью старается отделить грузинскую церковь от армянской.

24 Նույն տեղում։

Это обстоятельство сильно обеспокоило армянское духовенство и влиятельных князей, ибо в этом они видели серьезную политическую опасность, и они были правы.

Во первых, разделом единой церкви обрывалась одна из основных нитей, связывающих единство этих двух народов одной судьбы.

Во-вторых, грузинская церковь, таким образом, не только не получала самоуправления, но, приняв халкедонство, фактически подчинялась верховной власти греческой церкви, что было очень опасно.

Византийская империя, желая еще более укрепить свое положение в захваченных странах, нарочно разжигала религиозные ссоры и использовала любые средства для расчленения их единства. Следовательно, армяне были правы, когда боролись за то, чтобы ни в коем случае не допустить разделения церквей.

По этому вопросу, начиная с X века, образовалась огромная литература, которая в большинстве случаев в оценке этого вопроса подходила с религиозной точки зрения, тем самым отрицая наличие политических соображений. Такие крупные филологи и историки, как Лео Ив. Джавахишвили, Н. Акинян и другие, также считали этот спор чисто религиозным.

В статье на основе многочисленных исторических фактов показано, что раскол церкви, кажущийся с формальной стороны чисто религиозно-вероисповедательным, в своей основе имел определенные политические цели, диктовался и направлялся со стороны византийского двора.